

## **ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ**

Տարոն Եղիայի Գրիգորյանի՝ «Հարավային Հայաստանի էոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի էվոլյուցիան և կենսաշերտագրությունը ըստ պլանկտոն ֆորամինիֆերների» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԻԴ.01.01- «Ընդհանուր երկրաբանություն» մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

### **Թեմայի արդիականությունը**

Աշխատանքը նվիրված է Հարավային Հայաստանի տարածքում էոցեն-օլիգոցեն ժամանակաշրջանի նստվածքային ավազանի էվոլյուցիայի և կենսաշերտագրական առանձնահատկությունների ուսումնասիրմանը՝ ըստ պլանկտոն ֆորամինիֆերների: Օգտվելով ժամանակակից լիթոշերտագրական և կենսաշերտագրական մեթոդներից՝ ատենախոսությունում ներկայացվել են նստվածքակուտակման պայմանները, դրանց զարգացման փուլերը և ժամանակագրական հաջորդականությունը:

Աշխատանքում կարևորվում է պլանկտոն ֆորամինիֆերների կիրառումը՝ որպես կենսաշերտագրական մարկերներ, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել շերտերը և համադրել դրանք միջազգային սանդղակների հետ:

Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս վերակառուցել ավազանի զարգացման փուլերը և ճշգրտել էոցեն-օլիգոցեն սահմանները: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է պալեոգենի կենսաշերտագրական սխեմաների վերանայման անհրաժեշտությամբ, իսկ արդյունքները կարող են կիրառվել շերտագրական ուսումնասիրությունների և երկրաբանական քարտեզագրման աշխատանքներում:

### **Ատենախոսության բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, քննարկումից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Նախաբանում հակիրճ ներկայացված են թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները:

**Արենախոսության առաջին գլուխը** նվիրված է ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքին և պալեոգենի նստվածքային ավազանի ուսումնասիրման պատմությանը: Ներկայացվում են տարածաշրջանի երկրաբանական զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև պլանկտոն ֆորամինիֆերների մորֆոլոգիական և կենսաշերտագրական բնութագրերը:

**Արենախոսության երկրորդ գլուխը** նվիրված է Հարավային Հայաստանի էոցեն-օլիգոցենի նստվածքների լիթոշերտագրական և լիթոֆացիալ վերլուծությանը: Մանրամասն ուսումնասիրված են մի շարք կտրվածքներ՝ Ուրցաձոր, Շաղափ, Լանջառ, Ուրցալանջ և Մալիշկա, որտեղ ներկայացված են ապարների լիթոլոգիական կազմը, շերտերի հաջորդականությունը և նստվածքակուտակման պայմանների փոփոխությունները: Կատարված վերլուծությունների հիման վրա վերակառուցված են նստվածքային միջավայրերի զարգացումը: Գլխում ներկայացված են նաև նստվածքակուտակման ռեժիմի փոփոխությունների օրինաչափությունները և դրանց կապը տարածաշրջանի տեկտոնական կառուցվածքի հետ, ինչը հնարավորություն է տալիս վերականգնել նստվածքային ավազանի զարգացման փուլային դինամիկան:

**Արենախոսության երրորդ գլուխը** նվիրված է պլանկտոն ֆորամինիֆերների հիման վրա իրականացված կենսաշերտագրական զոնալ ստորաբաժանմանը ուսումնասիրված կտրվածքներում: Առանձին ենթաբաժիններով ներկայացված են Ուրցաձորի, Շաղափի, Լանջառի, Ուրցալանջի և Մալիշկայի կտրվածքները, որոնց համար կատարվել են պլանկտոն ֆորամինիֆերների մանրամասն վերլուծություն և շերտագրական բաժանում: Յուրաքանչյուր կտրվածքի համար սահմանվել են կենսազոնային ստորաբաժանումներ՝ հիմնվելով մարկեր տեսակների առաջին հայտնվելու (FO) և վերջին հանդիպման (LO) տվյալների վրա, ինչը հնարավորություն է տվել ճշգրտել շերտերի հարաբերական հասակը և առանձնացնել էոցեն-օլիգոցեն

միջակայքի կարևոր սահմանները: Ուրցածորի կտրվածքում իրականացվել է առավել ամբողջական կենսաշերտագրական վերլուծություն, որը ծառայել է որպես հենակետային կտրվածք տարածաշրջանի համար: Յուրաքանչյուր կտրվածքի համար սահմանվել են կենսազոնային ստորաբաժանումներ, որը հնարավորություն է տվել ճշգրտել շերտերի հարաբերական հասակը և առանձնացնել էոցեն-օլիգոցեն միջակայքի կարևոր սահմանները: Հեդինակի կողմից առանձնացվել են պլանկտոն ֆորամինիֆերների մի շարք կենսազոնաներ, որոնց սահմանները ճշգրտվել են ինչպես դասական մարկեր տեսակների, այնպես էլ լրացուցիչ ցուցիչների հիման վրա: Քննարկվել են նաև այն դեպքերը, երբ ստանդարտ մարկեր տեսակների բացակայության պայմաններում կիրառվել են այլընտրանքային մոտեցումներ, ինչը բարձրացնում է ստացված արդյունքների հուսալիությունը:

Ատենախոսության մեջ ներկայացված արդյունքները վկայում են, որ հեդինակի կողմից ստացված գիտական նորույթը ակնհայտ է և հիմնավորված:

1. Առաջին անգամ իրականացվել է Հարավային Հայաստանի էոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի համալիր ուսումնասիրություն՝ համադրելով լիթոշերտագրական, լիթոֆացիալ և կենսաշերտագրական տվյալները, ինչը հնարավորություն է տվել վերակառուցել ավազանի զարգացման փուլերը:
2. Պլանկտոն ֆորամինիֆերների հիման վրա իրականացվել է տարածաշրջանի կենսաշերտագրական զոնալ ստորաբաժանում՝ ճշգրտելով շերտագրական սահմանները և հիմնավորելով էոցեն-օլիգոցեն անցման առանձնահատկությունները:
3. Ստացված արդյունքները համադրվել են միջազգային կենսաշերտագրական սանդղակների հետ և առաջարկվել են այլընտրանքային մարկերներ, ինչը հնարավորություն է տալիս վերանայել և արդիականացնել Հայաստանի պալեոգենի կենսաշերտագրական սխեմաները:

Ատենախոսության եզրակացությունները բխում են բուն հետազոտությունից և արտահայտում են կատարված աշխատանքի էությունը:

Ատենախոսությունում նկատվել են հետևյալ թերությունները՝

1. Աշխատանքում ներկայացված են պլանկտոն ֆորամինիֆերների զոնալ ստորաբաժանումներ (օր.՝ P12, P14, E13, E14 զոնաներ), սակայն նպատակահարմար կլիներ ընթերցողին հակիրճ ներկայացնել տվյալ զոնաների բովանդակությունը՝ թեկուզ փակագծերում, ինչը կբարձրացներ աշխատանքի ընկալելիությունը:
2. Բերված կառուցվածքասխեմատիկ, երկրաբանական քարտեզներում ու երկրաբանական կտրվածքներում բերված անվանումները, ինչպես նաև նկար 3-ում (էջ 16) ներկայացված պայմանական նշանները տրված են անգլերեն լեզվով: Նպատակահարմար կլիներ, որպեսզի ամբողջ աշխատանքում կիրառվեր միասնական լեզվական մոտեցում և քարտեզագրական նյութերը ներկայացվեին հայերեն տերմինաբանությամբ:
3. Ներկայացված «լուսավորված շելֆային ծանծաղ ջրային պայմաններ» ձևակերպումը պահանջում է հստակեցում, քանի որ շելֆային ծանծաղ միջավայրերը իրենց բնույթով գտնվում են լուսավոր պայմաններում: Ուստի «լուսավորված» բնութագրումը տվյալ դեպքում չի տալիս լրացուցիչ տարբերակիչ տեղեկատվություն և նպատակահարմար կլիներ կիրառել ավելի հստակ ձևակերպումներ:

### **Եզրակացություն**

Տարոն Եղիայի Գրիգորյանի՝ «Հարավային Հայաստանի էոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի էվոլյուցիան և կենսաշերտագրությունը ըստ պլանկտոն ֆորամինիֆերների» թեմայով ատենախոսությունն ավարտուն աշխատանք է, որտեղ ստացվել են կարևոր արդյունքներ: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի

կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԻԴ.01.01- «Ընդհանուր երկրաբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի՝ Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի ընդլայնված նիստում /արձանագրություն N°7/, որին մասնակցել են՝ ամբիոնի վարիչ, Ե.Գ.Թ., դոցենտ Վ. Մանուկյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Մ. Մկրտչյանը, Ե.Գ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրոյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Շ. Խաչատրյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Գ. Գարեյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Ս. Ներսեսյանը, երկրաբ.-հանք.Գ.Թ., դոցենտ Ռ. Մովսեսյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Ա. Աղինյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Տ. Մկրտչյանը, Ե.Գ.Թ., դոցենտ Լ. Միրզոյանը:

Երևանի պետական համալսարանի  
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի  
Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների  
հետախուզման ամբիոնի վարիչ՝

Վ.Մ. Մանուկյան

Երևանի պետական համալսարանի  
Գիտական քարտուղար,  
Բանասիրական գիտությունների թեկնածու

Մ.Ա. Հովհաննիսյան

«07» Ապրիլի 2026թ.

